«Հաստատված է՝»
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 30.08.2019թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1
ամբիոնի պետ, ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Կրիմինալիստիկա
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՄԲԻՈՆ	Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն E-mail: OHGKRIM@mail.ru
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Բ. Ալեքսանյան, Լ. Սարդարյան E-mail: benik1962@mail.ru, հեռ.091-35-83-13 E-mail: lusine.sardarian@gmail.com, հեռ. 095-05-05-43
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	4-րդ կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	բակալավր

ԿՐԵԴԻՏՆԵՐ	5 (հինգ)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	«Կրիմինալիստիկա» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 150 ժամ, որից 48 ժամ դասախոսություն, 30 ժամ սեմինար, 2 ժամ գործնական, 70 ժամ ինքնուրույն աշխատանք: Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է քննությունով:
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ	Դասընթացը կառուցվում է «ՀՀ քրեական դատավարության իրավունք», «ՀՀ քրեական իրավունք» դասընթացների իմացության վրա:
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	«Կրիմինալիստիկա» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են ճանաչման ներկայացնելու, ցուցմունքը տեղում ստուգելու և դատական փորձաքննության նշանակման մարտավարությունը, հանցագործության բացահայտման և քննության ընդհանուր դրույթները, քննությանը ցույց տրված հակազդեցությունը հաղթահարելու միջոցները և մեթոդները, հանցագործության վայրից թաքնված հանցագործի պարզման եղանակները, առանձին տեսակի հանցագործությունների քննության առանձնահատկությունները:

ՆՊԱՏԱԿ		Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ՝ ճանաչման ներկայացնելու, ցուցմունքը տեղում ստուգելու և դատական փորձաքննության նշանակման մարտավարական առանձնահատկությունների, հանցագործությունների քննության մեթոդիկայի, քննությանը հակազդեցություն ցույց տվող սուբյեկտների և ձևերի, հանցագործի պաշտպանն ուղղված գործունեության հիմնական դրույթների, առանձին տեսակի հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագրերի և պարզաբանման ենթակա հանգամանքների վերաբերյալ:
ԽՆԴԻՐ/ՆԵՐ		Դասընթացի խնդիրներն են՝ 1) ուսումնասիրել ճանաչման ներկայացնելու, ցուցմունքը տեղում ստուգելու անցկացման և դատական փորձաքննության նշանակման մարտավարական առանձնահատկությունները, 2) ներկայացնել հանցագործությունների քննության մեդիկայի նշանակությունը և բովանդակությունը, 3) ներկայացնել քննությանը հակազդեցություն ցույց տվող սուբյեկտները և ձևերը ու դրանց հաղթահարման միջոցները և մեթոդները, 4) ուսումնասիրել հանցագործության վայրից թաքնված հանցագործի պարզման հնարավորությունները, 5) ներկայացնել առանձին տեսակի հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը, պարզաբանման ենթակա հանգամանքները, առաջնահերթ և հետագա քննչական գործողությունները:
ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ***Կարողանա՝***		1) ներկայացնել ճանաչման ներկայացնելու, ցուցմունքը տեղում ստուգելու նախապատրաստությունը, անցկացման մարտավարական հնարքները և դատական փորձաքննության նշանակման առանձնահատկությունները, 2) թվարկել հանցագործությունների քննության մեթոդիկայի բովանդակությունը, 3) ներկայացնել քննությանը ցույց տրված հակազդեցությունը հաղթահարելու միջոցները և մեթոդները 4) ներկայացնել հանցագործության վայրից թաքնված հանցագործի պարզման եղանակները և ձևերը, 5) թվարկել առանձին հանցատեսակների գործերով պարզաբանման ենթակա հանգամանքները, առաջնահերթ և հետագա քննչական գործողությունները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ		
Հիմնական		1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք 2. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք 3. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. (3-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով) – Երևանի պետ. Համալս. – Եր.: Երևանի համալս. հրատ., 2004 – 416 էջ 4. Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: Հատուկ մաս /չորրորդ հրատարակություն՝ փոփոխություններով և լրացումնե-րով/./Երևանի պետ. Համալս.- Եր.: ԵՊՀ. հրատ., 2009-1078 էջ: 5. Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդիկան:-Եր.: ԵՊՀ հրատ., 2009,- 416 էջ 6. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը /Վահե Ենգիբարյան-Եր.: Ան-տարես., 2016,- 256 էջ 7. Կրիմինալիստիկա: ՈՒս. Ձեռնարկ /Ա.Հ. Բախշինյան, Բ.Զ. Ալեքսանյան, Ս.Ա. Մարգարյան. – Եր.: Հեղինակային հրատարակություն, 2003. – 228 էջ 8. Криминалистика: учебник для бакалавров /Ю. В. Францифоров, А.Б. Смушкин, А.А. Рождествина. – 2-е изд., стер. – М.: Издательство <<Омега – Л>>, 2015 – 260 с.

		9. Криминалистика: учебник / под общей ред. А.Г. Филиппова. – изд., перераб. и доп. – М.: Высшее образование. 2009. – 835 с. 10. Криминалистика: учебник / под ред. А.Г. Филиппова. – М.: Высшее образование, Юрайт – Издат, 2009, - 441с 11. Криминалистика: учебник /Т.В. Аверьянова, Р.С. Белкин, Ю.Г. Корухов, Е.Р. Россинская. – 3-е нзд., перереб. и доп. – М.: Норма, 2008. – 944с.: ил. 12. Криминалистика: Учебник для вузов /Под ред. заслуженного деятеля науки РФ, проф. Р.С. Белкина. – 2-е изд., перераб. и доп. – М.: Норма, 2005. – 992с 13. Криминалистика. Конспект лекций. Сост. Н.Н. Смирнова. – СПб.: <<Лексикон>>, Агенство <<ВиТ – принт>>, 2002 – 192с 14. БАЕВ О.Я.Основы криминалистики: курс лекций, - М.: Экзамен, 2001. – 288с
Լրացուցիչ		1. Ալեքսանյան Մ., Նախնական քննություն. Եր. 2002 – 770 էջ: 2. Ալեքսանյան Մ. Փորձաքննությունը քրեական դատավարությունում /Փորձաքննություն նշանակելը և կատարելը, հետազոտման համար նմուշներ ստանալը/.- Եր.: Միվա-Պրեսս, 2009 3. Ա.Բ. Ավագյան, Ա.Գ. Հովսեփյան, Տ.Ռ. Պետրոսյան. <<Ռուս-հայերեն քրեագիտական համառոտ բառարան>>, Եր., <<այբ-Քե>>. 1993թ. 4. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքար.- Եր.: Լիմուշ. 2013.- 135 էջ: 5. Криминалистическая наука и теория механизма преступления: монография /под ред. засл. юриста Российской федерации, докт. Юрид. Наук, проф. А.М.Кустова.- М.: Юрлитинформ, 2016.- 672 с. 6. Настольная книга следователя /Рук. авт. кол. Н.П.Дудин; отв. ред. О.Н.Коршунова, В.С.Шадрин.- ЦПб.: Издательство Р.Асланова <<Юриди-ческий центр Пресс>>, 2008.- 908 с. 7. Шурухнов Н.Г. Расследование краж: Ппактическое пособие. – М.: Юрист. 1999 8. У17 Убийство: частные методики расследования: Курс леций /Под ред. А.М.Кустова.- М.: Издательство Московского психолого-социального института; Воронеж: Издательство НПО <<МОДЕК>>, 2010.- 880 с. 9. Наркотики. Свойства, действия, фармако-кинстика, метаболизм: Пособие для работников наркологических больниц, наркодинспансеров, химико-токсикологических и судебно-химических лабораторий. /Н.В.Ве-селовская, А.Е.Коваленко, Н.П.Папазов и др.- М.: Наркнет, 2002.-232с. 10. Справочная книга криминалиста /Руководитель авторского коллектива и ответственный редактор –доктор юридических наук, професор, Заслуженный деятель науки Россиской Федерации Н.А.Селиванов.-М.: Издательство НОРМА (Издательская группа НОРМА – ИНФРА - М), 2001 – 727с.

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ		Բաղադրիչ 1- 20% (Միջանկյալ 1) Բաղադրիչ 2- 20% (Միջանկյալ 2՝) Բաղադրիչ 3- 60% (ամփոփիչ քննություն)		
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ		Գնահատման արդյունարար միավոր	Գնահատականը տառանշումով	
		18-20	գերազանց	Միջանկյալ գնահատման միավոր
		13-17	լավ	Հարց 1 / Հարց 2
		8-12	բավարար	2 միավոր / 2 միավոր
		0-7	անբավարար	
		0	չներկայացած	
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ		Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն: Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:		

		Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝ ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով. բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների. գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները. դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:
ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ներկայություն **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ**		Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:
		Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:
		Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:
		Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:

ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

Թեմա 19 **Ճանաչման ներկայացնելու մարտավարությունը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ճանաչման ներկայացնելու հասկացությունը և տեսակները: 2. Ճանաչման ներկայացնելու նախապատրաստությունը: 3. Անձի, առարկաների, փաստաթղթերի, դիակի և դրա մասերի, կենդանիների ճանաչման ներկայացնելու մարտավարական հնարքները և դատավարական ամրագրումը	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք, կազմակերպվում է դիդակտիկ նյութի ցուցադրություն:

Թեմա 20 **Ցուցմունքը տեղում ստուգելու մարտավարությունը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Ցուցմունքը տեղում ստուգելու քննչական գործողության հասկացությունը և նպատակները: 2. Ցուցմունքը տեղում ստուգելու նախապատրաստությունը: 3. Ցուցմունքը տեղում ստուգելու մարտավարությունը և դատավարական ամրագրումը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք, իրականացվում են քննարկումներ տվյալ քննչական գործողության իրականացման անհրաժեշտության հարցերով:

Թեմա 21 **Դատական փորձաքննության նշանակման մարտավարությունը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Դատական փորձաքննության հասկացությունը և տեսակները: 2. Դատական փորձաքննությունների նախապատրաստությունը և նշանակումը: 3. Փորձագետի եզրակացությունը և դրա գնահատումը:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք՝ խնդրահարույց հարցերի քննարկմամբ:

Թեմա 22 **Հանցագործությունների բացահայտման և քննության ընդհանուր դրույթները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Առանձին հանցատեսակների քննության մեթոդիկայի հասկացությունը: 2. Առանձին հանցատեսակների քննության մեթոդիկայի հարաբերակցությունը կրիմինալիստիկական տեխնիկայի, քննչական մարտավարության, քրեական իրավունքի և քրեական դատավարության հետ: 3. Քննության մեթոդիկայի ելակետային դրույթները և խնդիրները: 4. Առանձին հանցատեսակների քննության կոնկրետ մեթոդիկայի բովանդակությունը:	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-4 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան:

Թեմա 23 **Քննությանը հակազդելը և դրա հաղթահարման ուղիները կրիմինալիստիկական ու օպերատիվ – հետախուզական միջոցներով և մեթոդներով** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քննությանը հակազդելու հասկացությունը, բովանդակությունը և	Հարցեր 1-4 անցկացվում է դասախոսություն:

սուբյեկտները: 2. Հանցագործության քողարկումը որպես քննությանը հակազդելու ձև, դրա հետևանքները կամ դրան առնչություն ունեցող անձիք: 3. Քննությանը արտաքին հակազդեցություն ցույց տալու ձևերն ու եղանակները: 4. Քննությանը ցույց տրված հակազդեցությունը հաղթահարելու միջոցները և մեթոդները:	Հարցեր 1-4 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան:

Թեմա 24 **Հանցագործության վայրից թաքնված հանցագործի պարզումը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Հանցագործի պարզմանն ուղղված գործունեության ընդհանուր դրույթները: 2. Հանցագործություն կատարած անձի պարզումը: 3. Հանցագործության վայրից թաքնված հանցագործի մերկացումը:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան:

Թեմա 25 **Սպանությունների և առողջությանը վնաս պատճառելու քննությունը** **(6 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Սպանության հատկանիշներ պարունակող սկզբնական նյութերի վերանայումը: Քրեական գործի հարուցման առիթներն ու հիմքերը սպանության վերաբերյալ գործերով: 2. Պարզաբանման ենթակա հանգամանքները սպանության գործերի քննության ընթացքում: 3. Քննչական և օպերատիվ-հետախուզական առաջնահերթ գործողությունները: 4. Հետագա քննչական գործողությունների կատարման առանձնահատկությունները սպանությունների գործերով: 5. Սպանությունների կատարմանը և առողջությանը վնաս պատճառելուն նպաստող պայմանների ու պատճառների պարզումը և դրանց կանխումը քննության նյութերով:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 3-4 անցկացվում է դասախոսություն: Հարց 5 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-5 սեմինար պարապմունք: Հարցեր 1-3 գործնական պարապմունք՝ խնդրի լուծում, քննության պլանի կազմում:

Թեմա 26 **Խուլիգանության քննությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական գործի հարուցման առանձնահատկությունները և ապացուցման ենթակա հանգամանքները խուլիգանության գործերով: 2. Առաջնահերթ քննչական գործողությունները խուլիգանության գործերով: 3. Հետագա քննչական գործողությունների առանձնահատկությունները և խուլիգանության կանխումը քննության նյութերով:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման եղանակով:

Թեմա 27 **Գողությունների քննությունը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Գողությունների վերաբերյալ գործերով ապացուցման ենթակա հանգամանքները: 2. Առաջնահերթ քննչական գործողությունները և քննության պլանավորման առանձնահատկությունները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք՝ քննարկման եղանակով:

3. Հետագա քննչական գործողությունների առանձնահատկություններ և գողությունների կանխումը քննության նյութերով:	

Թեմա 28 **Կողոպուտի և ավազակության քննությունը** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական գործի հարուցումը և քննության ընթացքում ապացուցման ենթակա հանգամանքները: 2. Առաջնահերթ քննչական գործողությունները կողոպուտի և ավազակության գործերով: 3. Հետագա քննչական գործողությունների առանձնահատկությունները:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան:

Թեմա 29 **Խարդախության քննությունը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական գործի հարուցման առանձնահատկությունները և ապացուցման ենթակա հանգամանքները: 2. Առաջնահերթ քննչական գործողությունները: 3. Հետագա քննչական գործողությունների առանձնահատկությունները և	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան:

Թեմա 30 **Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների քննությունը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական գործի հարուցման առանձնահատկությունները և ապացուցման ենթակա հանգամանքները: 2. Առաջնահերթ քննչական գործողությունների առանձնահատկությունները ՃՏՊ-ի գործերով: 3. Հետագա քննչական գործողությունները ՃՏՊ-ի գործերով:	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան:

Թեմա 31 **Հրկիզումների և հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների քննությունը** **(2ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քրեական գործի հարուցման առանձնահատկությունները: Քննության ընթացքում ապացուցման ենթակա հանգամանքները: 2. Առաջնահերթ քննչական գործողությունները: 3. Հետագա քննչական գործողությունների կատարման առանձնահատկությունները և հրդեհների կանխումը քննության նյութերով	Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան:

Թեմա 32 **Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների քննությունը** **(4 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Քննության ընթացքում ապացուցման ենթակա հանգամանքները: 2. Քննչական գործողությունների կատարման առանձնահատկությունները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարց 3 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-3 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան:

Թեմա 33 **Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների քննության առանձնահատկությունները** **(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)**	
Թեմայի հարցեր	**Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն**
1. Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը և պարզաբանման ենթակա հանգամանքները: 2. Տիպային քննչական իրադրությունները և առանձին քննչական գործողությունների մարտավարական առանձնահատկությունները:	Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն: Հարցեր 1-2 սեմինար պարապմունք՝ հարց ու պատասխան:

ՀԱՐՑԱՇԱՐ

«Կրիմինալիստիկա» առարկայից

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի 1-ին ընթացիկ (միջանկյալ) քննության

1. Ձերբակալման հասկացությունը և կատարման հիմքերը
2. Ձերբակալման նախապատրաստությունը
3. Ձերբակալման մարտավարական հնարքները և դատավարական ամրագրումը
4. Խուզարկության և առգրավման հասկացությունն ու տեսակները
5. Խուզարկության նախապատրաստությունը
6. Անձնական խուզարկության մարտավարությունը
7. Շինություններում, շենքերում և բնակարաններում կատարվող խուզարկության մարտավարությունը
8. Հարցաքննության հասկացությունը և տեսակները
9. Հարցաքննության նախապատրաստությունը
10. Վկայի և տուժողի հարցաքննության մարտավարությունը
11. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության մարտավարությունը
12. Առերեսման մարտավարությունը
13. Անչափահասների հարցաքննության մարտավարական առանձնահատկությունները: Փորձագետի հարցաքննությունը
14. Ճանաչման ներկայացնելու հասկացությունը և տեսակները
15. Ճանաչման ներկայացնելու նախապատրաստությունը
16. Անձին ճանաչման ներկայացնելու մարտավարությունը
17. Առարկաները, փաստաթղթերը, կենդանիները և դիակը ճանաչման ներկայացնելու մարտավարությունը
18. Ցուցմունքը տեղում ստուգելու քննչական գործողության հասկացությունն ու նպատակները
19. Ցուցմունքը տեղում ստուգելու նախապատրաստությունը
20. Ցուցմունքը տեղում ստուգելու մարտավարությունը

ՀԱՐՑԱՇԱՐ

«Կրիմինալիստիկա» առարկայից

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի բակալավրիատի առկա ուսուցման 4-րդ կուրսի 2-րդ ընթացիկ (միջանկյալ) քննության

1. Դատական փորձաքննության հասկացությունը և տեսակները
2. Փորձաքննության նախապատրաստումը և նշանակումը
3. Փորձագետի եզրակացությունը և դրա գնահատումը
4. Սպանության հատկանիշներ պարունակող սկզբնական նյութերի վերանայումը: Քրեական գործի հարուցման առիթներն ու հիմքերը
5. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունները սպանության վերաբերյալ գործերով
6. Քննությանը հակազդելու հասկացությունը, բովանդակությունը և սուբյեկտները
7. Քննությանը ցույց տրված հակազդեցությունը հաղթահարելու միջոցները և մեթոդները
8. Հանցագործություն կատարած անձի պարզումը
9. Քրեական գործի հարուցումը և ապացուցման ենթակա հանգամանքները խուլիգանության վերաբերյալ գործերով
10. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունները խուլիգանության վերաբերյալ գործերով
11. Քրեական գործ հարուցելու առանձնահատկությունները և ապացուցման ենթակա հանգամանքները գողությունների վերաբերյալ գործերով
12. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունները գողության վերաբերյալ գործերով
13. Քրեական գործի հարուցումը և ապացուցման ենթակա հանգամանքները կողոպուտի ու ավազակության վերաբերյալ գործերով
14. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունները կողոպուտի և ավազակության վերաբերյալ գործերով
15. Քրեական գործի հարուցման առանձնահատկությունները և ապացուցման ենթակա հանգամանքները խարդախության վերաբերյալ գործերով
16. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունները խարդախության վերաբերյալ գործերով

ՀԱՐՑԱՇԱՐ

«Կրիմինալիստիկա» առարկայից
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության
ֆակուլտետի բակալավրիատի առկա անվճար ուսուցման 4-րդ կուրսի քննության

1. Ձերբակալման հասկացությունը և կատարման հիմքերը:
2. Ձերբակալման նախապատրաստությունը:
3. Ձերբակալման մարտավարությունը բնակարանում և այլ շինություններում:
4. Բաց տեղանքում, հասարակական վայրերում և փողոցներում կատարվող ձերբակալման մարտավարությունը:
5. Խուզարկության և առգրավման հասկացությունը, նշանակությունը և խնդիրները:
6. Խուզարկության տեսակները և դրանց կատարման նախապատրաստությունը:
7. Բնակարանների (շենքերի, շինությունների) խուզարկության մարտավարական հնարքները և արդյունքների դատավարական ամրագրումը:
8. Բաց տեղանքի և անձնական խուզարկության կատարման մարտավարական հնարքները և արդյունքների դատավարական ամրագրումը:
9. Առգրավման մարտավարությունը և արդյունքների դատավարական ամրագրումը:
10. Հարցաքննության հասկացությունը և տեսակները: Հարցաքննության ընդհանուր դրույթները:
11. Հարցաքննության նախապատրաստությունը:
12. Վկաների և տուժողների հարցաքննության մարտավարության առանձնահատկությունները:
13. Կասկածյալի և մեղադրյալի հարցաքննության մարտավարության առանձնահատկությունները:
14. Առերեսման մարտավարությունը:
15. Անչափահասների և փորձագետի հարցաքննության առանձնահատկությունները:
16. Ճանաչման ներկայացնելու հասկացությունը և տեսակները:
17. Ճանաչման ներկայացնելու նախապատրաստությունը:
18. Անձին ճանաչման ներկայացնելու մարտավարությունը և արդյունքների դատավարական ամրագրումը:
19. Իրերը, առարկաները և դիակը ճանաչման ներկայացնելու մարտավարությունը և արդյունքների դատավարական ամրագրումը:
20. Տեղում ցուցմունքների ստուգման քննչական գործողության հասկացությունը և նպատակները:
21. Տեղում ցուցմունքների ստուգման նախապատրաստությունը:
22. Տեղում ցուցմունքների ստուգման մարտավարությունն ու արդյունքների դատավարական ամրագրումը:
23. Դատական փորձաքննության հասկացությունը և տեսակները:
24. Փորձաքննության նախապատրաստությունը և նշանակումը:
25. Փորձագետի եզրակացությունը և դրա գնահատումը:
26. Առանձին հանցատեսակների քննության մեթոդիկայի հասկացությունը, ելակետային դրույթները և կոնկրետ մեթոդիկայի բովանդակությունը
27. Հանցագործություն կատարած անձի պարզումը
28. Քննությանը հակազդելու հասկացությունը, սուբյեկտները և ձևերը
29. Սպանության գործերով քրեական գործ հարուցելու առանձնահատկությունները և ապացուցման ենթակա հանգամանքները:
30. Սպանության գործերով առաջնահերթ և հետագա քննչական գործողությունների առանձնահատկությունները:
31. Խուլիգանության գործերով քրեական գործ հարուցելու առանձնահատկությունները և պարզաբանման ենթակա հանգամանքները:
32. Առաջնահերթ և հետագա քննչական գործողութը ունները խուլիգանության գործերով:
33. Գողությունների գործերով քրեական գործ հարուցելու առանձնահատկությունները և պարզաբանման ենթակա հանգամանքները:
34. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունները գողությունների գործերով:
35. Կողոպուտի և ավազակության գործերով քրեական գործ հարուցելու առանձնահատկությունները և ապացուցման ենթակա հանգամանքները:
36. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունների առանձնահատկությունները կողոպուտի ու ավազակության գործերով:
37. Խարդախության գործերով քրեական գործ հարուցելու առանձնահատկությունները և ապացուցման ենթակա հանգամանքները:
38. Առաջնահերթ և հետագա քննչական գործողութը ունները խարդախության գործերով:
39. Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ գործերով քրեական գործ հարուցելու առիթներն ու հիմքերը և ապացուցման ենթակա հանգամանքները:

40. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունները ճանապարհատրանսպորտային հանցագործությունների վերաբերյալ գործերով:
41. Հրկիզումների, հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների վերաբերյալ գործերով քրեական գործ հարուցելու առիթներն ու հիմքերը և ապացուցման ենթակա հանգամանքները:
42. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունների առանձնահատկությունները հրկիզումների և հրդեհային անվտանգության կանոնների հանցավոր խախտումների վերաբերյալ գործերով:
43. Թմրամիջոցների պատրաստման, պահելու ու իրացման վերաբերյալ գործերով քրեական գործ հարուցելու առանձնահատկությունները և ապացուցման ենթակա հանգամանքները:
44. Առաջնահերթ և հետագա քննչական գործողությունների առանձնահատկությունները թմրամիջոցների պատրաստման, պահելու ու իրացման վերաբերյալ գործերով:
45. Անչափահասների կողմից կատարված հանցագործությունների կրիմինալիստիկական բնութագիրը և պարզաբանման ենթակա հանգամանքները:
46. Տիպային քննչական իրադրությունները և քննչական գործողությունների մարտավարական առանձնահատկությունները անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ գործերով